ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր,

իրենց երկրների միջև տնտեսական և առևտրական հարաբերություններում տեխնիկական խոչընդոտների վերացման նպատակով,

ցուցաբերելով համագործակցությունը զարգացնելու ձգտում ստանդարտացման, չափագիտության, լաբորատորիաների և սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման, ինչպես նաև արտադրանքի, անձնակազմի և որակի համակարգերի սերտիֆիկացման ոլորտում, ելնելով տվյալ ոլորտներում միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված սկզբունքներից և նորմերից,

ղեկավարվելով երկու Կողմերի պետությունների տնտեսական շահերով,

երկու պետություններում գործող օրենսդրության շրջանակներում

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը փոխադարձաբար ճանաչում են իրենց երկրներում գործող ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, սերտիֆիկացման և հավատարմագրման պետական (ազգային) համակարգերը:

Կողմերը՝

միմյանց միջև համաձայնեցված կարգով փոխադարձաբար ճանաչում են չափման միջոցների պետական փորձարկումների, տեսակի հաստատման, ստուգաչափման, ստուգաճշտման և չափագիտական վկայագրման արդյունքները և այն կազմակերպությունները, որոնք կատարում են ստուգաչափման և փորձարկման լաբորատորիաների և կենտրոնների հավատարմագրում, ինչպես նաև նրանց կողմից հավատարմագրված լաբորատորիաները և կենտրոնները, որոնք իրականացնում են չափման միջոցների ստուգաչափում, փորձարկումներ և ստուգաճշտում,

ճանաչում են մյուս Կողմի հավատարմագրված սերտիֆիկացման մարմինները, ստուգաչափական և փորձարկման լաբորատորիաները (կենտրոնները), փոխադարձաբար առաքվող արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատները և նշանները՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում մարմինների կողմից որոշվող՝ համաձայնեցված կարգով,

Ճանաչում են Կողմերի ճանաչմանն արժանացած՝ սերտիֆիկացման միջազգային և ազգային համակարգերում տրված փորձագետ-աուդիտորների սերտիֆիկատները,

կիրառում են մյուս Կողմի ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման նորմատիվ փաստաթղթերը, եթե նրանց պահանջները չեն հակասում տվյալ պետության գործող օրենսդրության համաձայն՝ ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման ազգային մարմնի կողմից գործողության մեջ դրված սահմանված կարգին:

Հոդված 2

Կողմերն իրականացնելու են միմյանց միջև համագործակցությունը համաձայնագրերի, արձանագրությունների և ծրագրերի հիման վրա, որոնք նախատեսում են.

համագործակցություն ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման նորմատիվ և մեթոդական փաստաթղթերի մշակման ընթացքում,

կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում,

ֆիզիկական մեծությունների միավորների ազգային չափանմուշների և ելակետային նմուշային չափման միջոցների ստեղծում, կատարելագործում և համեմատում,

նյութի և նյութերի բաղադրությունների և հատկությունների, ստանդարտ նմուշների, ինչպես նաև նյութի և նյութերի ֆիզիկական հաստատունների և հատկությունների մասին ստանդարտ տեղեկատվության ստեղծում և օգտագործում,

ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, սերտիֆիկացման և հավատարմագրման պետական (ազգային) համակարգերի հետագա զարգացում, կատարելագործում և ներդաշնակեցում,

ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման բնագավառում տեղեկատվական գործունեության զարգացում:

Հոդված 3

Կողմերը կաջակցեն միմյանց ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման բնագավառում այն միջազգային կազմակերպություններին անդամագրվելուն, որոնց անդամ է Կողմերից մեկը, և այդ կազմակերպություններում աշխատանքներ կատարելուն:

Հոդված 4

Կողմերն ապահովում են ստացվող փաստաթղթերի և սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվող աշխատանքների և նվաճված գիտատեխնիկական արդյունքների մասին տեղեկության գաղտնիությունը, եթե փոխանցող Կողմը նշում է դրանց գաղտնիության մասին:

Հոդված 5

Համագործակցության ընթացքում ստացած գիտատեխնիկական տեղեկությունը Կողմերից յուրաքանչյուրը կարող է ազատ օգտագործել, եթե մյուս Կողմը չի նշել դրա գաղտնիության մասին, այդ տեղեկությունը կարող է փոխանցվել երրորդ կողմի միայն այն տրամադրող Կողմի համաձայնությամբ:

Հոդված 6

Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքների համակարգումը և իրագործումը հանձնարարվում է.

Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչությանը,

Բելառուսի Հանրապետությունում՝ Բելառուսի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման պետական կոմիտեին:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի դրույթներն անհրաժեշտության դեպքում կոնկրետացվում են սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում նշված մարմինների միջև լրացուցիչ համաձայնագրերով և արձանագրություններով՝ Կողմերի պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը չի շոշափում այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են Կողմերի՝ նախկինում կնքած պայմանագրերից:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման հետ կապված բոլոր վիճելի հարցերը լուծվելու են Կողմերի փոխադարձ խորհրդակցությունների և բանակցությունների ճանապարհով՝ տարբեր մակարդակներով:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամանակով և ուժի մեջ է մտնում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար Կողմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսվող բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին գրավոր տեղեկացնելով իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողությունը դադարում է այդ ծանուցումը մյուս Կողմի ստանալուց 6 ամիս հետո:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում առաջացած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Կատարված է Մինսկ քաղաքում 2000 թվականի հունվարի 18-ին, երկու բնագիր օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի հունիսի 29-ից: